Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

23/09/2021թ. ք. Եղեգնաձոր

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Վայոց Ձորի տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող արդարադատության ավագ լեյտենանտ Ա. Պետրոսյանս ուսումնասիրելով 18.08.2021թ. վերսկսված թիվ 07182418 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 29.01.2021թ. տրված թիվ ԱՎԴ4/0186/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Թամարա Գրիգորյանից, Մագել Մարգարյանից, Նինել Բադալյանից և Քնքուշ Շերոյանից համապարտության կարգով հօգուտ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բռնագանձել 769.144 ՀՀ դրամ և տոկոսներ, ինչպես նաև բռնագանձման ենթակա գումարի 5%-ը որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Վայոց Ձորի տարածաշրջանի բաժանմունքում պարտապան Նինել Բադալյանի վերաբերյալ հարուցված է ևս թվով 4 կատարողական վարույթ, ընդհանուր 2.266.077 ՀՀ դրամ և տոկոսներ բռնագանձման պահանջով:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Նինել Ֆրունզեի Բադալյանին սեփականության կամ համասեփականության իրավունքով պատկանող գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել որոնց վրա կարելիէ բռնագանձում տարածել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Կասեցնել 18.08.2021թ. վերսկսված թիվ 07182418 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ***Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ***

Digitally signed by
PETROSYAN AVAG
1602860173
Date: 2021.09.25
09:34:48 AMT